# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

**Տվյալների շրջանակը, որոնք մշակելու իրավասություն է տրվում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ «Բանկ», գրանցման համար՝ 9, ՀՎՀՀ՝ 00005409)՝ անձի (հետագա տեքստում՝ «Հաճախորդ») կողմից սույն համաձայնությունը որևէ եղանակով (փաստաթղթային/էլեկտրոնային) հաստատելու դեպքում.**

✓ մինչև անձի՝ Բանկի հետ գործարար իրավահարաբերության մեջ մտնելը և այդ իրավահարաբերության ընթացքում անձին նույնականացնելու, որոշումներ ընդունելու, կարծիք ձևավորելու, իրավունքներ ձեռք բերելու կամ իրավունքներ կամ արտոնություններ տրամադրելու կամ իրավունքները սահմանափակելու կամ զրկելու և այլ նպատակներով (ընդ որում՝ անձի վերաբերյալ տեղեկությունները Բանկը կարող է հավաքագրել իրավաչափ ցանկացած եղանակով, ինչպես անմիջապես իրենից, այնպես էլ՝ օրենքով չարգելված ցանկացած այլ աղբյուրներից) **մշակել, այդ թվում՝ հավաքագրել, ամրագրել, մուտքագրել, համակարգել, կազմակերպել, պահպանել, վերափոխել, վերականգնել, փոխանցել /Բանկի հետ համագործակցության կամ քաղաքացիական այլ պայմանագրերի հիման վրա ծառայություններ մատուցող անձանց կամ կազմակերպություններին(այդ թվում՝ օտարերկրյա), ՀՀ և օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններին/, ուղղել, ուղեփակել, ոչնչացնել, օգտագործել**, ինչպես նաև՝ **դիմել** ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, ինչպես նաև՝ տվյալներ մշակող ցանկացած անձի և **ստանալ** Հաճախորդի վերաբերյալ անհրաժեշտ, այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված և պաշտպանվող, հետևյալ տեղեկատվությունը՝ չսահմանափակվելով ցանկով.

**1. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ**

Հաճախորդի անձնական և Հաճախորդին վերաբերող տվյալները.

1.1. անուն, երկրորդ անուն(հայերեն և անգլերեն), ազգանուն, նաև նորը (հայերեն և անգլերեն), հայրանուն (հայերեն և անգլերեն),

1.2. անձը հաստատող փաստաթղթի տեսակ, այդ թվում՝ նախկին (անձնագիր, նույնականացման քարտ, ծննդյան վկայական, արտասահմանյան անձնագիր, արտասահմանյան ծննդյան վկայական, Ձև 9 տեղեկանք, Ձև 1 փաստաթուղթ, կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ, ժամանակավոր անձը հաստատող փաստաթուղթ, կացության քարտ, անձը հաստատող վկայական, զինգրքույկ, տեղեկանք Անձնագրային և վիզաների վարչության անձնագրային բաժնից (ԱՎՎ ԱԲ), Անձնագրային և վիզաների վարչության ճամփորդական փաստաթուղթ (ԱՎՎ ՃՓ), վերադարձի վկայական, բիոմետրիկ անձնագիր, փախստականի վկայական և այլն), փաստաթղթի համար, փաստաթուղթը տրամադրող բաժին, քաղաքացիություն, երկրորդ քաղաքացիություն, փաստաթղթի տրման ամսաթիվ, փաստաթղթի վավերականության ժամկետ, անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկար,

1.3. ազգություն,

1.4. ծննդավայր (մարզ, համայնք, երկիր), ծննդյան վայրի հասցե,

1.5. աշխատանք, զբաղմունք,

1.6. հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու մասին տեղեկանք,

1.7. վերջին 12 ամիսների ընթացքում վճարված եկամտային հարկի, կուտակային կենսաթոշակային վճարների, աշխատած ժամերի քանակի մասին տեղեկատվություն,

1.8. կենսունակության (ողջ/ մահացած) կարգավիճակ,

1.9. ծննդյան ամսաթիվ,

1.10. սեռ (արական/իգական),

1.11. կրթություն (չունի/միջնակարգ/միջին մասնագիտական/բարձրագույն/թերի բարձրագույն/թերի միջնակարգ/մագիստրատուրա/տարրական/ավագ դպրոց),

1.12. ՀՀ բնակության կոդ, ՀՀ բնակության մարզ, համայնք, բնակավայր, փողոց, տուն, շենք, տան տեսակ, բնակարան, գրանցման հասցե, երբվանից է բնակվում)

**2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ**

2.1. ամուսնական կարգավիճակ (ամուսնացած/ամուսնացած չի եղել/ամուսնալուծված/այրի/ամուրի),

2.2. ամուսնության գրանցման հիմքը, այդ թվում՝ ամուսինների համատեղ դիմումը, ամուսնության ամսաթիվը,

2.3. ՔԿԱԳ-ում գրանցված ակտի ամբողջական համար (այդ թվում՝ սերիա), տեսակ, գրանցման ամսաթիվը, բաժանմունքը, վկայական(ներ)ի համար(ներ)ը, վկայական(ներ)ի տրման ամսաթիվը, նույնականացման համար,

2.4. դիմողի վերաբերյալ սույն համաձայնագրի 1-ին կետում նշված տվյալները,

2.5. հոր/ամուսնու/կնոջ/մոր/մահացողի վերաբերյալ սույն համաձայնության 1-ին կետում նշված տվյալները,

2.6. երեխայի վերաբերյալ սույն համաձայնության 1-ին կետում նշված տվյալները,

2.7. տեղեկատվություն այն մասին, թե քանի երեխա է ծնվել (կենդանածին/մեռելածին), որերորդ երեխան է, հայրության հիմքը (ամուսնության վկայական/հայրության ճանաչում/մոր հայտարարություն/դատարանի վճիռ (վճռի ամսաթիվ, համար)/ծնողների համատեղ դիմում/ծնողներից մեկի դիմում, դիմումի տրման ամսաթիվ), խնամակալի վերաբերյալ սույն համաձայնության 1-ին կետում նշված տվյալները, ամուսնալուծության պատճառը, ազգանունը փոխելու պատճառը, բժշկական հաստատության անվանումը, որտեղ բուժվում է, փաստաթղթի անվանումը, համարը, տարեթիվը, զինծառայողի դեպքում զինվորական կոմիսարիատները, կարգավիճակը, ծառայության վայրը,

**3. ՀՀ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ**

Կատարողական վարույթի՝

3.1. կոդը,
3.2. մուտքի ամսաթիվը,
3.3. հարուցման համարը, բնույթը, բաշխման կարգը,
3.4. պարտապանի անունը, հասցեն,
3.5. տոկոսի հաշվարկի հայտանիշը,
3.6. բռնագանձման ենթակա գումարի չափը,
3.7. կատարված ծախսերի գումարի չափը,
3.8. հայցի ապահովման գումարի չափը,
3.9. ալիմենտի գումարի չափը,
3.10. վարույթի մնացորդը,
3.11. դատարանի կոդը,
3.12. կատարողական թերթի համարը/նախկին համարը, տրման ամսաթիվը,
3.13. կատարողական թերթի պահանջը/նախկին պահանջը, ընթացիկ չլինելու դեպքում ինչ հոդվածով է փոփոխված, փոփոխման ամսաթիվը,
3.14. վարույթի վիճակը,

**4. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ**

Ավտոտրանսպորտային միջոցի (ԱՍՄ) տվյալներ, այդ թվում՝

4.1. ունիկալ ID,
4.2. նույնացման համարը (VIN),
4.3. շարժիչի հզորությունը (ձիաուժ),
4.4. քաշն առանց բեռնվածության,
4.5. գույնը,
4.6. փաստաթղթի համարը,
4.7. հաշվառման համարանիշի տեսքը,
4.8. թափքի տեսակը,
4.9. կարգավիճակը,
4.10. սեփականության վկայականի համարը,
4.11. պետական հաշվառման վկայականի համարը,
4.12. տեսակի խումբը,
4.13. մոդելը,
4.14. վառելիքի տեսակը,
4.15. տարանցիկ համարանիշը,
4.16. հատուկ նշումների վերաբերյալ տեղեկատվություն,
4.17. հենասարքի համարը,
4.18. թողարկման տարեթիվը,
4.19. տեսակը,
4.20. առավելագույն թույլատրելի բեռնվածությունը,
4.21. հաշվառման ամսաթիվը,
4.22. շարժիչի համարը,
4.23. ժամանակավոր հաշվառման համարը,
4.24. դեղին հաշվառման համարը,
4.25. մակնիշը,
4.26. տիպարը,
4.27. կիրառված սահմանափակումները,
4.28. գրավադրման մասին տվյալները (գրավադրման ամսաթիվ, գրավադրված գումարի չափ, գրավադրված գումարի արտարժույթ, գրավադրման վայր, թույլատրվում է վերագրավադրել, թե ոչ, այդ թվում՝ գրավատուի վերաբերյալ սույն համաձայնության 1-ին և/կամ 7-րդ կետերում նշված տեղեկատվությունը),

4.29. հաշվառված անձի մասին տվյալները,
4.30. սեփականատիրոջ մասին տվյալները,
4.31. ապահովագրման մասին տվյալները (ԱՊՊԱ գործակալ, պայմանագրի սկիզբ, ավարտ),
4.32. վարորդական վկայականի համարը, կարգերը, զրկված լինելու մասին նշումներ,
4.33. ֆիզիկական անձի դեպքում սույն համաձայնության 1-ին կետում նշված տվյալները, իսկ իրավաբանական անձանց դեպքում սույն համաձայնության 7-րդ կետում նշված տվյալները,
4.34. սեփականության ծագման-ավարտի ամսաթիվ,
4.35. հիմնադրի, իրավաբանական անձի ցուցիչ, քաղաքացիության ցուցիչ, սահմանափակումների մասին տեղեկությունների ցուցիչ, բաժնեմասի տվյալներ սեփականության վկայականի համար,
4.36. սեփականատիրոջ ունիկալ համար այդ թվում սույն համաձայնության 1-ին և 7-րդ կետերում նշված տվյալներ, գործարքի նկարագրություն, հայտի համար, գործարքի գինը այդ թվում սույն համաձայնության 4-րդ կետում նշված տեղեկատվություն, Խախտման առկայության դեպքում՝
4.37. խախտման ունիկալ համարը,
4.38. խախտման ամսաթիվը,
4.39. խախտման կարգավիճակը,
4.40. խախտման արխիվացման ցուցիչը,
4.41. որոշման ամսաթիվը,
4.42. որոշման համարը,
4.43. փոստի պատասխանի ամսաթիվը,
4.44. ծանուցման մանրամասները,
4.45. տուգանքի գումարի չափը,
4.46. բռնագանձման ենթակա գումարը,
4.47. վճարված գումար, վճարման ամսաթիվը,
4.48. որոշման պայմանանիշը, առաքման ամսաթիվը,
4.49. մանրամասներ, արագություն, ՃԵԿ կետ, խախտման վայր, խախտում արձանագրող անձ/տեսախցիկ, խախտման հոդված (կետ, պրիմ, մաս), խախտման տեսակ, ՀՀ ՎԻՎ հոդված, կետ, մաս, ամսաթիվ,
4.50. խախտող անձի հասցեն, անունը, ազգանունը, հայրանունը, ՀԾՀ, հաշվառման վկայականի համարը, ԱՏՄ մակնիշը/մոդելը, պետական համարանիշը,
4.51. ազդարար ուղարկելու ամսաթիվը,
4.52. վճարման գանձապետական հաշիվը,
4.53. ծանուցելու մասին տեղեկատվությունը (անհայտ, ետ է վերադարձել, ՃՈ թերի հասցե, մերժված, չի ստացել (չի պահանջվել), ստացել է առձեռն, այլ),

**5. ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻՑ**

Հաճախորդին սեփականության իրավունքով պատկանող՝
5.1. անշարժ գույքի միավորի էլեկտրոնային նույնականացման համարը,
5.2. անշարժ գույքի միավորի հասցեն (մարզ, համայնք, հասցե),
5.3. հողամասի նպատակային նշանակությունը՝ ըստ ՀՀ հողային օրենսգրքով սահմանված ՀՀ հողային ֆոնդի դասակարգման,
5.4. հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ըստ ՀՀ հողային օրենսգրքով սահմանված ՀՀ հողային ֆոնդի դասակարգման,
5.5. հողամասի մակերեսը,
5.6. հողամասի նկատմամբ գրանցված իրավունքի տեսակը,
5.7. շենք/շինությունների նպատակային նշանակությունը,
5.8. շենք/շինությունների տեսակը,
5.9. շենք/շինությունների գումարային մակերեսը,
5.10. շենք/շինությունների նկատմամբ գրանցված իրավունքի տեսակը,
5.11. իրավունքների գրանցման ամսաթիվը,
5.12. գործարքից ծագող իրավունքների գրանցման ամսաթիվը,
5.13. գույքի ձեռքբերման հիմքում ընկած գործարքի տեսակը,
5.14. գույքի ձեռքբերման պայմանագրի գինը և արժույթը,
5.15. գույքի ձեռքբերման գործարքի մյուս կողմի տվյալները (ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրի սերիա, համար, ՀԾՀ, բնակության վայրի հասցեն, իրավաբանական անձի լրիվ անվանումը, ՀՎՀՀ,
5.16. գույքի օտարման գործարքի մյուս կողմի (ձեռքբերողի, վարձակալի) տվյալները (ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրի սերիա, համար, ՀԾՀ, բնակության վայրի հասցեն, իրավաբանական անձի լրիվ անվանումը, ՀՎՀՀ),
5.17. գույքի օտարման պայմանագրի գինը և արժույթը՝ հատուցելի գործարքների դեպքում:

**6. ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ**

Կազմակերպության՝

6.1. գրանցման համարը,
6.2. անվանումը՝ հայերեն-անգլերեն-ռուսերեն,
6.3. կազմակերպաիրավական տեսակը (ամբողջական տեսակի կոդը, հապավումը),
6.4. հարկ վճարողի հաշվառման համարը,
6.5. գործունեության տեսակի դասակարգչի կոդը,
6.6. բաժնեմասերի ընդհանուր քանակը,
6.7. բաժնեմասի արժեքը ՀՀ դրամով,
6.8. գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը,
6.9. գործադիր մարմնի ղեկավարի՝ սույն համաձայնության 1-ին կետում նշված տվյալները (ֆիզիկական անձի դեպքում)/սույն համաձայնագրի 7-րդ կետում նշված տվյալները (իրավաբանական անձի դեպքում),
6.10. գործադիր մարմնի ղեկավարի հեռախոսահամարը (նաև՝ բջջային),
6.11. գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային փոստի հասցեն,
6.12. սոցիալական ապահովագրի կոդ,
6.13. մասնակցի/բաժնետիրոջ մուտքի, ելքի ամսաթիվ,
6.14. կազմակերպության/անձի ID,
6.15. տեղեկություններ հիմնադիր լինելու մասին,
6.16. ձեռնարկության կոդ,
6.17. մասնաբաժինների քանակը,
6.18. տեղեկություն լուծարման մասին,
6.19. գործադիր մարմնի ղեկավարի մասին տվյալներ՝ հասցե, գրանցման հասցե, էլեկտրոնային փոստ, կազմակերպության պաշտոնական (գործունեության) հասցե, սեփականության վկայականի համար, համակարգի ներքին պարամետրեր, կազմակերպության ներկա քաղվածք, կազմակերպության կանոնադրություն

✓ մինչև ցանկացած, այդ թվում՝ վարկային (պարտավորական այլ) պայմանագիր կնքելը, իսկ կնքման դեպքում դրա գործողության ողջ ընթացքում ցանկացած պահին առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու մեկից ավելի անգամ **կատարել հարցումներ** իրավասու այլ պետական և ոչ պետական մարմիններին, կազմակերպություններին, այդ թվում՝ ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մարմիններին և անձանց, ստանալ և տրամադրել ցանկացած տեղեկություն, այդ թվում՝ Հաճախորդի ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, Հաճախորդի եկամուտների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից կարող են հաշվի առնվել Հաճախորդի հետ վարկային (պարտավորական այլ) պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս, Հաճախորդի հետ դրամական պարտավորություններ առաջացնող որևէ հարաբերության մեջ մտնելու կամ նման հարաբերության մեջ մտնելու առաջարկ ներկայացնելու նպատակով, ինչպես նաև՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից ցանկացած այլ ծառայությունների մատուցման կապակցությամբ: Ընդ որում՝ Հաճախորդը տեղեկացված է, որ ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել սույն պարբերությամբ տրված համաձայնությունից, բացառությամբ, եթե Հաճախորդի և Բանկի միջև արդեն ծագել են դրամային պարտավորություններ ենթադրող հարաբերություններ:

✓ մինչև ցանկացած, այդ թվում՝ վարկային (պարտավորական այլ) պայմանագիր կնքելը, իսկ կնքման դեպքում դրա գործողության ողջ ընթացքում ցանկացած պահին առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու մեկից ավելի անգամ Բանկը կարող է **կատարել հարցումներ** «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեֆորթինգ» փակ բաժնետիրական ընկերության վարկային բյուրոյին, ստանալ և տրամադրել ցանկացած տեղեկություն, այդ թվում՝ Հաճախորդի ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, վարկային զեկույցներ, առևտրա-վարկային, հարկային զեկույցներ, հետևյալ աղյուսակում նշված նպատակ(ներ)ով՝

| Նպատակ | Ժամկետ | Ազդեցությունը վարկային սքորի վրա | Պարտադիրությունը | Հաճախականությունը |
|---|---|---|---|---|
| Այլ ծառայությունների մատուցման առաջարկի ներկայացում | Մինչև իրավահարաբերության մեջ մտնելը | Չի ազդում կամ ցածր հավանականությամբ է ազդում | Ոչ պարտադիր | Սահմանված չէ |
| Վարկառուի հետ փոխկապակցված անձի ֆինանսական վիճակի մոնիթորինգ | Մինչև Վարկառուի կողմից Բանկի հետ իրավահարաբերության մեջ մտնելը և իրավահարաբերության ամբողջ ընթացքում | Չի ազդում կամ ցածր հավանականությամբ է ազդում | Պարտադիր | Սահմանված չէ |
| Երաշխավորի/գրավատուի՝ որպես նոր վարկի տրամադրման համար | Մինչև իրավահարաբերության մեջ մտնելը | Բացասական | Պարտադիր | Սահմանված չէ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ապահովման միջոց տրամադրողի ֆինանսական վիճակի ստուգում | | | | |
| Երաշխավորի/գրավատուի՝ որպես գործող վարկի համար ապահովման միջոց տրամադրողի ֆինանսական վիճակի ստուգում և/կամ ընթացիկ մոնիթորինգ | Մինչև իրավահարաբերության մեջ մտնելը/ իրավահարաբերության ամբողջ ընթացքում | Չի ազդում կամ ցածր հավանականությամբ է ազդում | Պարտադիր | Սահմանված չէ |
| Նոր վարկի տրամադրում/վարկի գումարի ավելացում/վարկի տրամադրման պայմանի փոփոխություն | Մինչև իրավահարաբերության մեջ մտնելը և իրավահարաբերության ամբողջ ընթացքում | Բացասական | Պարտադիր | Սահմանված չէ |
| Գործող վարկի մոնիտորինգ | իրավահարաբերության ամբողջ ընթացքում | Չի ազդում կամ ցածր հավանականությամբ է ազդում | Պարտադիր | Սահմանված չէ |

Հաճախորդը տեղեկացված է, որ վերոնշյալ հարցումները կարող են ազդել Հաճախորդի **վարկային սքորի** վրա վերոնշյալ աղյուսակում նշված կերպով:
Հաճախորդը տեղեկացված է, որ ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել սույն պարբերությամբ տրված համաձայնությունից, բացառությամբ, եթե Հաճախորդի և Բանկի միջև արդեն ծագել են դրամային պարտավորություններ ենթադրող հարաբերություններ:

**Ստորագրելով կամ որևէ եղանակով հաստատելով սույն համաձայնությունը՝**

- ✓ անձը տալիս է իր անվերապահ համաձայնությունը՝ սկսած իր կողմից սույն համաձայնությունը ստորագրելու (հաստատելու) պահից՝ Բանկի կողմից վերոնշյալ գործողությունների կատարման համար:
- ✓ անձը գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները՝ կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից կայացվող համապատասխան որոշումների վրա:
- ✓ անձը հավաստում է, որ տեղեկացված է և գիտակցում է, որ տվյալները կարող են տրամադրվել Բանկի աշխատակիցներին, ովքեր իրավասու են զբաղվելու տվյալներ մշակմամբ:
- ✓ անձն ընդունում է, որ հարցված անձնական տվյալները պահպանվելու են անժամկետ՝ նույնիսկ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի հետ իրավահարաբերությունների գործողության ավարտից հետո:
- ✓ անձը հաստատում է, որ տեղեկացված է, որ կարող է ցանկացած ժամանակ պահանջել դրանց ուղղում կամ ոչնչացում կամ մշակման դադարեցում, ինչպես նաև կատարել մշակման հետ կապված այլ գործողություններ՝ ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ,
- ✓ անձը հաստատում է, որ տեղեկացված է, որ ցանկացած ժամանակ կարող է հետ կանչել սույն համաձայնությունը, որի դեպքում Բանկը պարտավոր է դադարեցնել անձնական տվյալներ մշակելը և ոչնչացնել տվյալները՝ հետկանչը ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը պարտավոր է ոչնչացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել անձին անձնական տվյալները ոչնչացնելու մասին:
- ✓ անձը հավաստում է, որ կարդացել է սույն համաձայնությունը և հավաստում է, որ համաձայնության տեքստն իր համար ամբողջությամբ հասկանալի, ընկալելի և ընդունելի է:

**Տվյալների մշակող է հանդիսանում՝ «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ. 13):**